

Հավելված N 2
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2024թվականի դեկտեմբերի 13 -ի N 845-Ա որոշման

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿՁՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝
Ն.Մարկոսյան
« 13 » դեկտեմբերի 2024թ.

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տարի 2025

Ներածություն

Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների :

2025թվականի տարեկան ծրագիրը կազմվել է Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի 2025-2027 թվականների ռազմավարական ծրագրի հիման վրա:

Ի տարբերություն ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի, որը սահմանում է հաջորդ երեք տարիների ընթացքում ընդգրկվելիք աշխատանքները, աուդիտի տարեկան ծրագիրը տրամադրում է տեղեկատվություն ներքին աուդիտի բաժնի առաջադրանքների բնույթի վերաբերյալ, որոնք ակնկալվում են իրականացնել 2025թվականի ընթացքում:

Տարեկան ծրագիրը սահմանում է 2025թվականի ընթացքում Բյուրեղավանի համայնքապետարանում իրականացվող առաջադրանքների անցկացման նպատակները և աշխատանքի շրջանակները, ինչպես նաև ժամանակացույցը՝ ըստ առանձին առաջադրանքների:

Ներքին աուդիտի ստորաբաժանման դերը և նշանակությունը

Ներքին աուդիտի 2025թվականի տարեկան ծրագիրը նախատեսվում է իրականացնել ներքին աուդիտի բաժնի ռեսուրսների և անհրաժեշտության դեպքում ներգրավված փորձագետների միջոցով: Ներքին աուդիտի բաժինը ապահովում է տարեկան ծրագրի իրականացումը մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան:

Տարեկան ծրագրի պլանավորումը և հաստատումը

Աուդիտի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով ներքին աուդիտի բաժնի պետը մշակել և Բյուրեղավան համայնքի ղեկավարի ու ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն է ներկայացրել 2025թվականի Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված տարեկան ծրագիրը և դրա փոփոխությունները հաստատվում են ներքին աուդիտի բաժնի պետի կողմից և վավերացվում Բյուրեղավան համայնքի ղեկավարի կողմից:

Ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսային փոխկապակցված գործունեության տեսակները

Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի բաժնի հետ փոխկապակցված գործունեության տեսակներն են՝

- ա) շարունակական մասնագիտական վերապատրաստումը,
- բ) ներքին աուդիտի կոմիտեի նիստերին մասնակցությունը,
- գ) ներքին աուդիտի վերաբերյալ սեմինարների վարումը և դրանց մասնակցությունը:

Ներքին աուդիտի բաժնի աշխատանքների կազմակերպումը

Բյուրեղավանի համայնքապետարանում ներքին աուդիտի աշխատանքներն իրականացվում են Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից: Բաժինը կազմված է մեկ հաստիքային միավորից՝ ներքին աուդիտի բաժնի պետ:

